

ՀԱՆԴԻՍԱԻՈՐ ՄՈՒՏՔ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱՐԴԻՆԱԼ

[illegible]

Ի Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ (ՀՈՌՄ)

Մինչև 203-րդ բախտն ունեցաւ ներկայ գտնուելու այդ օրուան շքեղ հանդէսին՝ անշուշտ զգաց ազգային հպարտութիւն մը իր կուրծքին տակ, և հոգեկան խայտանք մ'ը իր հոգւոյն մէջ։

Իմաստունն և լուսամիտ մեծ Քաջանայապետին կողմէ Կարգինալուծեամբ մեծարուած մեր Գերերջ. Գրիգոր-Պետրոս ԺԵ Կաթողիկոս-Պատրիարքը՝ այս առաջին անգամն էր որ պաշտօնապէս կ'ընդունուէր, տաճարէն դուրս՝ որտալն դուռ ծափերով, ու ներսը ոսկեձեղուն ու լուսազարդ կամարին տակ՝ երգչախումբին բազմաձայն նուագով:

Ո՛րքան նշանակալից եր դեպքը, ո՛րքան մեծախորհուրդ իմաստը՝ իրարու օղակուած երեք փարեիի անուններու. Ս. Բարբողիմեոս Առաքելայ... Հայաստան... Հայ Կարդիեալ Պատրիարք... Խօսուեն պատկեր մը՝ լոյսի ճաճանչներով քանդա- կուած մեր հոգիներուն խորը:

Թերեւս Հայերէ շատերուն զարմանալի թուի Տանն Կիլիկիոյ Գերերջանիկ Գազակալին Կարգինալութեան հետ՝ միաժամանակ այդ Տիտղոսաւորութիւնը:

Վաղեմի սովորութիւն է Հռովմի մէջ, որ Սրբ. Քահանայապետը երբ Կարմը՝ կու տայ անոր կարդինալական մատանիին հետ նաեւ Յուսիտենական Քաղաքի հին տաճարներէն (basilica) մէկուն տիրապետը, թէպէտեւ ան կապուած ըլլայ մի և նոյն ատեն իբր Եպիսկոպոս կամ Պատրիարք՝ առանձին թեմի կամ Գաւառի կամ ազգի, ինչպէս Աղաճանեան Կաթողիկոսի պարագան էր։

Եւ Տիտղոսաւոր կարգինալը ըլլայ եպիսկոպոս կամ ոչ՝ իր եկեղեցւոյն մէջ գրեթէ թեմականի յատուկ իրաւասութիւն մը ունի. կրնայ տալ հասաւոր պաշտօն. իր դահլը հոն ամպհոմանի կը կրէ. իսկ իր կենդանագիրը աւագ խորանի կամարին ձախակողմը կը կախուի. աջակողմը՝ Ս. Պապինը։ Նոյնպէս սովորուած է որ անոր գինանշանը (arma) Ս. Պապի գինանշանին հետ քով քովի դրուի եկեղեցւոյ մուտքին արտաքին ճակատին վրայ։ Տիտղոսաւոր կարգինալին մահէն վերջ՝ հնգետասան ծոպերով զարդարուած անոր կարմիր գլխարկը եւս (Galero), - որուն սկզբնաւորութիւնը մինչեւ 1245 թուականը կը բարձրանայ -, կը կախուի այդ եկեղեցւոյն առաստաղէն մինչեւ իր բոլորական փճացումը։

Արդ, վեհ. Սահակ...
Սահակ...
Սահակ...

Արդ, վեհ. Աղաճանեան կաթողիկոսի նշանակուած էր Տիրերիս գետի գերկը հանգչող «Ս. Բարթողիմէոսի կղզւոյ» անուամբ ճանչցուած տաճարը:

Այս գեղեցիկ տաճարը Միջին դարու մէջ կը կոչուէր Ս. Բարբողիմէոս ի ճառաւ: Անոր սկզբնաւորութիւնը մինչեւ ժ. դար կը հասնի. այդ ժամանակ

նուիրուած էր Փրակայի Ս. Ատալբերգոյ եպիսկոպոսին, որու մասունքները Ս. Փառւինոյ, Ս. Բարթողիմէոս, Լզուպերանցիոյ և Մարչելլոյ վկաներու նշխարներուն հետ մէկտեղ՝ սոյն եկեղեցւոյն մէջ զետեղուած են Գերմանիոյ Ոթոն երիտասարդ կայսեր ձեռքով: Տաճարը Տիբերիսի ողողումներէն սաստիկ կերպով վնասուած է 1557 թուականին, բայց հետագայ դարերու ընթացքին հետզհետէ վերանորոգուած ու ճոխացած է՝ իր նախկին վիճակին մերձենալով: Խորանին տակ կը պահուի պորփւրէ սափորի մէջ Ս. Բարթողիմէոսի և Նուայի Ս. Փառւինոս եպս.ի և վերոյիշեալ միւս սուրբերուն նշխարները ¹:

Այս է պատմականը գեղեցիկ տաճարին:

Այս է պատմականը գեղեցիկ տաճարին։
Մարտ 10-ի կերակին էր ուրեմն, որ ժամը 16,30-ին Տանն Կիլիկիոյ մեր վեհափառ Կաթողիկոս-Պատրիարքը՝ Գրիգոր Պետրոս ԺԵ. ծիրանեփառ Կար, գինալ Աղաճանեան՝ իր պաշտօնական մուտքը կատարեց սոյն տաճարին մէջ՝ իբրեւ անոր Տիրութեամբը։ Եկեղեցւոյն հրապարակին մէջ ժողովուրդը ովսն նաներու մէջ բնդունեցաւ զինքը, մինչ վերը զօւարթագին կը ղողանէին զան զաները։ Եւ ինչ որ բոլոր խաւացիներու յատուկ հետաքրքրութեան առիթ գտնեցին։ Եւ ինչ որ բոլոր խաւացիներու յատուկ հետաքրքրութեան առիթ եղաւ՝ վեհ. Պատրիարքին փոխանակ Cappa Magna-ի՝ զգեցած ծիրանեգոյն հայկական փելոնը և գլուխը դրած կարմիր քողազարգ գամելաֆին էր, որու ճակատին կը փայլէր ոսկեգորտագ խաչ մը։ Այս գեղեցիկ բացառութիւնը Եկեղեցւոյ իշխաններու ամբողջ պատմութեան մէջ առաջինն է։

Այսպէս մեր Հ. Կաթ. Նուիրապետութեան վեհ. Պատրիարքական
ժողովրդային խորհրդակալ ցոյցերու մէջ, հետեւորդ ունենալով Արհ. Գերպ.
Պետրոս Արք. Բէտիմեան՝ Տիարաստոր Կողմերիոյ Հայոց, Ռիսիա Ընդհ. Աբ-
րահայր Գերպ. Սրապիոն վ. Ուլուհոնեան և Հայ և Իտալացի բարձրաստիճան
Եկեղեցականներ։ Մուսթին առհէւ ընդունուեցաւ Արաշխիի Փրանկիսեանց
Գաւառականէն որ շուրջառակիր էր, մինչ կը թնդար եկեղեցին «Ecce sacer-
dos-ի» տպաւորիչ խմբերգով։

[illegible]

Աղաճանեան Կարգինսլ իր Գահը բազմակի գործը կատարելու համար
քեկական Աւագ Նոտար՝ Կարդաց Տխողասի ստացման (Possesso) քահանայապետ
ստական Կոնդակը։ Այս փրանկիսկեան Կարգի Ընդհանրականը յարգանքի

1. *M. Armellini*: Le chiese di Roma dal sec. IV al XIX. Roma 1891, p. 620.

* * *

Ժամանակն հասած էր այլևս դեպքերու վեհագոյնին. հսկումի ժամ մը կ'ապրէինք այլեւս:

Մեր մտքերն սկսած էին սաւառնիլ անդին հորիզոնին ծայրը... Վատիկանեան բարձունքին շուրջը, հոն նշմարելով Հրեշտակ մը ձիւնազգեստ ու չքեղ տեսարանի մը խորհրդաւոր հեռապատկերը...:

Համաշխարհային կոթող և անմրցելի Գլուխ-Գործոց դարձած Սիքստեան Մատրան մէջ, ուր վեհաժողովներու Մեծագոյնը կը գումարուի ամէն անգամ որ ընտրութիւն պիտի ըլլայ Հռովմի Սրբ. Քահանայապետի՝ ճիշտ հոն պիտի կատարուի օր մը վերջ... Հայկական Զայնաշոր:

Գէպք մը հոյակապ, որ իբր աննախընթաց՝ միաժամանակ պիտի գրաւէ ամէնէն ուշագրաւ և թանկագին էջերէն մին Ընդհանուր Եկեղեցւոյ պատմութեան և Հայ Կաթ. Պատրիարքութեան տարեգրութիւններուն:

... Այլ և դարձեւ զար և սերունդէ սերունդ շնորհապարտ զգացումներով և օրհնութեամբ պիտի յիշատակուի Հայաստանի Անմահներու կարգին՝ Տանն Կիլիկիոյ մեր Պատրիարքութեան Աթոռը փառաւորօղ և Հայ Ծէսը պանծացնող Պիոս ԺԲ և թ Քահանայապետին Օգոստոսի փառ Անունը:

Հ. ՂԵՒՈՆԴ ՏԱՅԵԱՆ



Ամերիկացի սպաներու խումբը Գերպ. Ասրաթոր Սրապիոն վ. Ուլուհոցեանի հետ՝ լուսանկարուած շոգեկառքի մէջ
Gruppo degli ufficiali Americani con S. E. Mons. Abate Serapione Uluhogian, fotografati nel treno

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՅՆԱԽՈՐ ՊԱՏԱՐԱԳ

ՍԻՔՍՏԵԱՆ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ

* * *

Եկեղեցւոյ 19 դարերու կեանքին մէջ առաջին ու աննախընթաց դէպք մըն է զոր պիտի արձանագրենք այլևս յաւերժօրէն աշխօրուան ու վաղուան պատմագիրները:

Հայ ծէսը, հայ լեզուն, հայկական պատարագը իր պաշտօնեաներու դասակարգով, կաթողիկոսէն մինչեւ խոնարհ դպիրները, հայ տաճարներու պարզ ու ազգային շրջանակէն յանկարծ փոխադրուեցան Վատիկան տարւոյս Մարտի 12-ին, հրաւերովն ու պատուասիրութեամբը Անոր՝ որուն կը խոնարհին որպէս Քրիստոսի Փոխանորդի՝ չորս հարիւր միլիոն հաւատացեալներ ամէն երկրէ, ամէն ցեղէ եւ ամէն լեզուէ:

Հոն ուրեմն, Վատիկանի Սիքստեան մատրան մէջ, ներքեւ այն կամարներու զոր հրաշակերտած է մարդկութեան գերագոյն հանճարը՝ Միքանձելոյ, յանդիման անոր ահեղ ու անմահ «Վերջին դատաստան»ին, երեւցաւ Հայ ծէսի պատարագը իր բոլոր փառաւորութեամբ, իր հարազատ պերճ լեզուով եւ սրտազրաւ երգերով, Հայ եկեղեցւոյ օծուն ու բարեպաշտիկ աղօթքներով, հայ կուսաններու եւ տիկիւններու աչքին լոյսով ու նուրբ մատնեքով՝ ասղնեգործ ոսկի ու արծաթ բանուածներով, հայ ոսկերիչներու դրուագած սերուբէնաւոր զոյգներով, սկիզով եւն: Իսկապէս բացառիկ ցուցահանդէս մը հայ սրբազան արուեստին՝ զոր տեսան զմայլանքով եւ բարեպաշտութեամբ ամէն ազգի ներկայացուցիչներ, ու աննախանձ փառաբանեցին Հայուն հաւատքը, արուեստն ու քաղաքակրթութիւնը:

Պատրաստութիւն. - Այն օրէն երբ Ս. Քահանայապետը Պիոս ԺԲ քրիստոնէական հոգւոյ մեծութեամբ, հայ ազգին հանդէպ ունեցած հայրական սիրով եւ ի մասնաւորի Գերերջանիկ Հոգեւոր Տէր Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան Կաթողիկոսի հոգեկան ու մտաւոր բարձր ձիրքերը գնահատելով՝ զանկա ուղած էր ծիրանաւորական չքեղ պատուով պսակել, առաջինը դասելով զանկա քրիստոնեայ մեծագոյն ազգերու եկեղեցական ընտրելագոյն դէմքերուն, ըստ ինքեան այն օրէն սահմանուած կ'ըլլար հայ ծէսով պատարագի մատուցումը Սիքստեան մատրան մէջ Ն. Ս. Քահանայապետին Թագադրութեան տարեդարձին օրը, քանի որ նորընտիր Ծիրանաւոր դասի առաջինին սահմանուած է այդ պատիւը դարաւոր սովորութեամբ նուիրականացած:

Հանդերձ այնու, հարկ է ըսել թէ եւ ոչ մէկուն մտքէն կ'անցնէր նման բացառութիւն մը: Եւ ինչ որ վեր էր մեր ակնկալութենէն, իրականացաւ Պիոս ԺԲ. Սրբազան Քահանայապետին բոլորովին անձնական հաճութեամբ եւ կարգադրութեամբ:

Ս. Պապի փափաքին գործադրութեան համար իսկոյն զբաղեցաւ Արեւելեան Ս. Ժողովը՝ զլիաւորութեամբ Յրանաացի գիտնական ու հայագէտ ծիրանաւոր Եւզինէոս Թիսօբրանի, համաձայնութեամբ նոյնինքն Հոգեւոր Տէր Աղաճանեան Ծիրանաւոր Պատրիարքի, եւ Հռովմէ մէջ